

35.

## Արցախի Տիգրանակերտի և շրջակայքի հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները\*

ՀԱՄԼԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ, ԺՈՐԵՍ ԽԱԶԱՏՐՅԱՆ,  
ԱՇՈՏ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ, ՎԱՐԴԳԵՍ ՍԱՖԱՐՅԱՆ

**Գործադիր ամփոփում:** Հետազոտական խումբը՝ կիրառելով աղբյուրագիտական, տեղագրական ու Հնագիտական հետազոտությունների համալիր մեթոդաբանություն՝ ուսումնասիրել է Խաչենագետի ներքնահովտի պատմա-հնագիտական միջավայրը և հանգել այն եզրակացության, որ Արցախի Տիգրանակերտ քաղաքի ավերակները՝ բաղկացած ամրակայված հատվածից, քաղաքային ընդարձակ թաղամասից և երկու դամբարանադաշտերից՝ գտնվում են ներկայիս Շահբուլաղ կոմոդ աղբյուրի շրջակայքում:

**Արդիականության հիմնավորում:** Հանրահայտ է, որ Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման մեջ կարևոր դերակատարում ունեն և պատմա-մշակութային բնույթի փաստարկները: Արցախի՝ բնիկ պատմական հայկական տարածք լինելու և մինչև 18-րդ դ. համարյա միատարր էթնիկ բնակչության ունենալու հանգամանքները մի անգամ չէ, որ կարևորվել են դարաբաղյան խնդրի զանազան մակարդակի քննարկումներում և այդ խնդրի լուծմանը միտված մոտեցումներում: Խիստ բնութագրական պիտի համարել, որ Արցախի հուշարձանների ցանկացած հետազոտություն առաջ է բերում աղբյուրագիտական իշխանությունների բողոքը՝ ընդհուպ մինչև միջազգային կազմակերպություններ բողոքների ու նոտաների հղումը: Այս առումով հայաստանյան արդի հայա-

\* Հետազոտությունն իրականացրել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետազոտական արշավախումբը Հայրենադարձության և հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միության նախաձեռնությամբ ու ֆինանսավորմամբ (նախագահ Սևակ Արծրունի): Տպագրվում է առաջին անգամ:

գիտուլթյան կարևոր խնդիրներից մեկն էլ Արցախի ընդգծված էթնամշակութային կերպար ունեցող հուշարձանների և պատմական իրողությունների հայտնաբերումը, ուսումնասիրությունը և ներկայացումն է պետական մարմիններին, հասարակութայնն ու քաղաքական գործիչներին:

Նմանաբնույթ երևույթների շարքում առաջնային կարևորություն ունի Արցախի Տիգրանակերտի Փենոմենի բացահայտումը, քաղաք, որը լավագույն կերպով կարող է վկայել Արցախի էթնամշակութային նույնականությունը ողջ Հայաստանի հետ սկսած առնվազն մ. թ. ա. վերջին դարերից մինչև մ. թ. 11-12-րդ դարերը: Այն ենթադրում է այդ բնակավայրի հիմնադրման հանգամանքների պարզաբանում, նրա կոնկրետ տեղագրութայն հստակեցում և ի վերջո նրա հնագիտական հետազոտութայն կազմակերպում:

Հետազոտութայն մեթոդաբանությունը: Արցախի Տիգրանակերտի մասին առկա աղբյուրագիտական, տեղագրական ու պատմագիտական քննությունը հիմք էր տալիս հավանական համարել, որ բնակավայրի ավերակները պետք է փնտրել Խաչենագետի ներքնահովտում, այնտեղ, ուր Արցախյան լեռնաշղթան շեշտակի անկումներով ձուլվում է տափաստանի հետ, և որտեղով հնում հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-աչևելք ձգվող մոտավոր դժով իրարից բաժանվում էին Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգները: Հենց այս դժի վրա էին ըստ 7-րդ դարի պատմիչ Սեբեոսի գտնվում մյուս Տիգրանակերտը, որը պատկանում էր Ուտիքին, և Տիգրանակերտ ավանը, որը պատկանում էր Արցախին:<sup>1</sup> Հստակորեն տեղայնացնելու համար Արցախի Տիգրանակերտը, հետազոտական խումբը որպես պայմանական կենտրոն ընդունեց Խաչենագետը հարթավայր դուրս գալու կետը, և ուսումնասիրեց մոտ 10 կմ շառավղով ընդարձակ մի տարածքի հուշարձանները: Հետազոտութայն առաջին փուլը ներառում էր տարածքի ճարտարապետական ու հնագիտական դրսևորումների լուսանկար-չական վավերացումը, քարտեզագրումը, թվագրումը և բնութագրումը, վերգետնյա հնագիտական նյութերի հավաքումը, լուսանկարչական վավերացումը, թվագրումը և բնութագրումը: Երկրորդ փուլը ենթադրում էր ստացված արդյունքերի համադրում առկա աղբյուրագիտական-տեղագրական քննութայն հետ և այս հիման վրա Տիգրանակետի տեղագրութայն հստակեցում:

**Տիգրանակերտի ընդհանուր հնագիտական բնութագիրը:**  
Դաշտային հետազոտությունները հիմք են տալիս խոսելու ինչպե-  
նազետի ներքնահնավտում առնվազն չորս խոշոր պատմա-մշակու-  
թային ժամանակների մնացորդների առկայությունը՝ բրոնզ-երկա-  
թեղարյան, հելենիստական-անտիկ, միջնադարյան, 18-20-րդ դդ.:

Տիգրանակերտի տեղադրության համար շատ ավելի կարևոր  
են մ.թ.ա. վերջին դարերի և մ.թ. առաջին դարերի հուշարձաննե-  
րի և հնագիտական մնացորդների վավերացումը: Այս տեսակե-  
տից ինչպե՞նազետի ներքնահնավտում վավերացված հուշարձաննե-  
րի շարքում ամենաուշագրավն, անշուշտ, երկու մեծ բնակատեղի-  
ներն են՝ տեղադրված ինչպե՞նազետի աջ և ձախ ամբարից համարյա  
հավասար հեռավորության վրա՝ մեկը Սոֆուլու գյուղի, իսկ  
մյուսը՝ Շահբուլաղ կոչվող աղբյուրների մերձակայքում: Ընդ-ո-  
րում, հայագիտական գրականության մեջ հենց այս երկու վայ-  
րերն էին համարվում Տիգրանակերտի հնարավոր տեղադրության  
վայրեր:

Սոֆուլուի մոտի ընդարձակ բնակատեղին, որը հայտնի է  
Գյավուրկալա (բառացի՝ անհավատների բերդ) անունով, 60-70-  
ական թթ. մասնակի ուսումնասիրվել է ադրբեջանցի հնագետնե-  
րի կողմից:<sup>2</sup> Այստեղ այսօր էլ դիտելի են վաղմիջնադարյան եկե-  
ղեցու ավերակները, սարկոֆագային դամբարանադաշտը, վաղ-  
միջնադարյան խաչակիր կոթողի պատվանդանը: Եկեղեցին իր  
հատակագծումով, հյուսիսային ավանդատան պատին փորագր-  
ված խաչային հորինվածքով և կղմինդրների հավաքածոյով կա-  
րելի է թվագրել 5-6-րդ դդ.:

Տեղանքից հավաքած խեղեղենը ներկայանում է նաև վաղ  
ջնարակի ուշագրավ օրինակներով, որի հիման վրա կարելի է  
բնակավայրի գոյության վերին սահման համարել 9-րդ դարը: Այս  
տարածքում, ինչպես ժամանակին կատարված պեղումների ժա-  
մանակ, այնպես էլ մեր տեղադնություն ընթացքում, ավելի վաղ  
չըջանի, այդ թվում և Տիգրան Մեծի ժամանակին վերաբերող,  
նյութեր չհայտնաբերվեցին: Սա բավարար հիմք է հավաստելու,  
որ Տիգրանակերտը Գյավուրկալայի տեղում տեղադրելը խիստ  
անհավանական է:

Արչավախումբը մանրամասնորեն հետազոտեց նաև Շահբու-  
լաղ կոչվող աղբյուրների շրջակայքը, որը 19-րդ դ. տեղագիրնե-

րի մոտ հայտնի է նաև Թնգրնակերտ, Թառնակերտ, Թառանյուրտ կամ Թառնագյուրտ<sup>3</sup> անուններով՝ հնչողությամբ շատ մոտ Մովսես Կաղանկատվացու օգտագործած Տկուակերտին<sup>4</sup> և ի վերջո Տիգրանակերտին: Այս հետազոտությունն արդյունքները կարելի է ուղղակի սենսացիոն համարել, քանի որ հնարավոր դարձավ վավերացնել ընդարձակ մի բնակավայրի ամրակառույցների ձգվող հետքերը, քաղաքային թաղամասը՝ եկեղեցական շինությունների հաստահեղույս քարուկիր պատերով, կարասային ու քարարկղային թաղումներից բաղկացած երկու գերեզմանոցները, և ինչը որ ամենակարևորն է, մ.թ.ա. առաջին դարի խեցեղենի բազմաթիվ նմուշներ:

Նախ հետախուզվեց աղբյուրներից դեպի վեր ձգվող լեռան ժայռերիզը: Վավերացվեց, որ այն մոտ 200 մ երկարությամբ պատված է երկայնական ժապավենատեսք, աստիճանաձև բարձրացող հարթակներով: Նման ձևով են մշակված նաև Արմավիր և Արտաշատ մայրաքաղաքների մարմարե և բազալտե ժայռերը: Ակնհայտ է, որ մենք գործ ունենք պարսպապատերի ժայռեղեն հիմքերի հետ: Այս ամրապատի երկայնակի ձգվող հիմքերը երկու տեղերում էլ լրացվում են կիսաշրջան փորածո հատվածներով, որոնք էլ վկայում են, որ պարիսպները ուժեղացված են եղել կիսակլոր աշտարակներով:

Ամրապատի հատվածում մակերեսից հավաքած խեցեղենի մեջ առկա են գունազարդ տարբեր անոթների բեկորներ: Դրանք հարդարված են բաց գույնի մակերեսին կարմիրով արված ժապավեններով, եռանկյունիներով, ճառագայթաձև և այլ տիպի զարդերով, որոնք բնորոշ են մ.թ.ա. 1-ին դարի առաջին կեսի խեցեղենին և աղբյուրում են Հայաստանի հելենիստական մյուս հնավայրերի նյութերի հետ: Քիչ չեն նաև ոչ գունազարդ անոթների և կարասների բեկորները:

Ըստ երևույթին ամրակայված մասը կազմել է քաղաքի միջնաբերդը, իսկ ստորոտի հարթ մասը՝ քաղաքային թաղամասը, որին կից էլ վավերացվել են մ.թ.ա. 1-ին – մ.թ. 1-ին դարերի կարասային թաղումներով և վաղմիջնադարյան քարարկղային թաղումներով դամբարանադաշտերը: Քաղաքային թաղամասում վաղմիջնադարյան եկեղեցու ավերակները, վերգետնյա համաժամանակյա խեցեղենի մնացորդները վկայում են, որ բնակավայրը

գործել է նաև վաղ միջնադարում:

Ի վերջո, տեղի ընտրությունը կարևոր դեր է խաղացել և աղբյուրների առկայությունը, որոնց շնորհիվ լուծվել է և քաղաքի ջրամատակարարման խնդիրը:

**Եզրակացություն:** Արշավախմբի վավերացրած հնագիտական փաստերը լիովին բավարար են, որպեսզի, մատենագրական ու տեղագրական տվյալների հաշվառմամբ, Արցախի Տիգրանակերտը տեղագրվի Շահբուլղի աղբյուրներից դեպի Վանքասար ձգվող լեռան ներքնամասում և նրան հարավից կից հարթությունում:

Հետազոտություն արդյունքները վկայում են նաև, որ Խաչենագետի ներքնահովիտը հանդիսանում է մշակութային և բնական մի յուրօրինակ տարածք, որը ցուցադրում է հայ էթնամշակութային մշտական ներկայությունը ընդհուպ մինչև նոր ժամանակները: Ուստի, ինչպես Տիգրանակերտի հնագիտական հետազոտությունը, այնպես էլ Խաչենի ողջ ներքնահովտի համալիր հետազոտությունը հայագիտության առաջնահերթ խնդիրներից մեկն է:

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<sup>1</sup> Պատմութիւն Սեբեոսի /Աշխ. Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 125:

<sup>2</sup> Ամփոփ արդյունքերը տես Վահիդով Ռ. Մ., Հնագիտական պեղումները Գյալուրկալայում - Ադրբեջանի նյութական մշակույթը, հ. 4, Բաքու, 1965, էջ 167-181 (ադրբեջաներեն):

<sup>3</sup> Պատմութիւն Սեբեոսի, էջ 292, 299: Ջալալեանց Ս., Ճանապարհորդութիւն ի Սեծն Հայաստան, 1858, մասն բ, Տփլիսի, էջ 344-345: Բարխուտարեանց Մ., Արցախ, Բագու, 1895, էջ 28:

<sup>4</sup> Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983 էջ 300: